

որ հոջան (Ռաֆայէլ) Ամսդերտամի մէջ հանդիպեցաւ Օռլօֆ Իշխանին եւ գայն համոզեց Հնդկական գոհարը գնել իր սիրուհիին՝ Կատարինէ Բ. Յարուհիին համար: Օռլօֆ ինքն ալ այս ժամանակ ցամաքորդութեան մէջ էր: Կատարինէի տեսնութեան պատճառաւ, ինքզինքը բացակայեցուցած էր արժուինիքէն, մինչեւ որ փոքորիկը անցնէր: Խոջային առաջարկը ջերմօրէն ընդունուեցաւ, քանի որ առաջնակարգ առիթ մը կը ներկայանար Կայսրուհիին շնորհքը վերստանալու, որ կ'աւանդուի թէ արդէն մերժած էր գնել ադամանդը շատ սուղ ըլլալուն համար, եւ որ, սակայն, այժմ գոհարը կ'ըստանար իր մեծանուն հպատակէն: Օռլօֆ վաճառականին վաւրեց 90.000 անգլիական ոսկի կանխիկ (450,000 տոլար), սակէ գատ անոր հայքայքելով 4,000 անգլիական ոսկիի (20,000 տոլար) տարեկան ռոնիկ: Ըստ կարգ մը պատմութեանց՝ ազնուականութեան իրաւունք մ'ալ աւելցուած էր:— Պարսիկ ուղեգիր Մերգա Ապու Դայէպ Պան, որ հանդիպած էր Սոջա Ռաֆայէլի ի Լիվոնո, գայն կը նկարագրէ իրր մէկը, որ աշխարհ տեսած էր եւ բազմաթիւ լեզուներ գիտէր: Պարսկաստանէն մեկնած էր, երիտասարդ եւ ծովով Սուրադ անցած էր, ուրկէ ցամաքով՝ Պէնկալ: Հոն ժամանակ մը բնակելէ վերջ, Անգլիա ցամաքորդած էր եւ, Եւրոպայի մեծ մասին մէջ ցամաքորդելէ վերջ, իրր վաճառական Լիվոնիոյ մէջ հաստատուած էր: (Travels in Asia, Africa, and Europe.— London, 1814, Vol. II, p. 301):

Շատ հաւանաբար, Սոջա Ռաֆայէլ զոհարին տիրացաւ ի Սուրադ, որ միշտ թանկագին քարերու մեծ շուկայ մը եղած է: (23)

Սոջա Ռաֆայէլի բուն անունը Սոջա Յովհաննէս Ռաֆայէլ էր: Անոր մէկ աղբրսագիրբողորմագիրը 1769, 12 Սեպտեմբեր, Լոնտոն, թուագրուած, մեզի ի մէջ այլոց կ'իմացնէ.

«Մարտ 27, 1768—էն մինչեւ 28 Օգոստոս 1768, հինգ ամիս (Գրիգոր Սօճալամի հետ

միասին ապօրինի կերպով բանտարկուած էին), որուն ընթացքին զատապարտուած ոճրագործներէ աւելի վատ վերաբերմունքի ենթարկուած էին: Սոջա Ռաֆայէլ, նախ, ձիերու ախոտի մը մէջ բանտարկուած էր, որմէ վերջ երկուքն ալ խիստ բանտարկութեան ենթարկուած են (Իստ Ինտիայ) Ընկերութեան Սիրօյներու ուժեղ պահակներով, սուրհակուրեալ, որոնք երբէք թոյլ չտուն, որ ստորագրեալները իրենց տեսողութենէն հեռանան»: (24)

Հետաքրքրական է, որ Սոջա Յովհաննէս Ռաֆայէլ, Նոր Զուգայեցի զոհարավաճառը մեզի ծանօթ Եփրեմ Սատի եւ Տէր Սարգիս զոհարավաճառներուն նման «աշխարհ տեսած բազմաթիւ լեզուներ» զիտցող մըն է:

Օռլօֆեան այս նշանաւոր ազամանդի «Բագմովէպ»եան պատմուած տարբերակին մէջ կը յիշուի միջնորդ Եղիազարեան հայ իշխանին միջնորդութիւնը: Այս տարբերակին զօրացման կը նպաստէ Հէպէր (Heber), որ ԺԸ դարուն Նոր Նախիջեան իր իր այցելութեան ատեն կը տեսակցի քաղաքին երեւելիներէն Արրահամեանի հետ, որ «կը ճանչնար Լազարօֆը, որ Օռլօֆին ծախեց խոջոր ազամանդը: Արրահամեան նկարագրեց զօրաւոր կերպով թշուառութիւնը եւ անձկութիւնը, որուն մատնուած էր ան (Լազարօֆը), մինչ ազամանդը դեռ իր մօտ կը գտնուէր»: (25)

ԺԸ դարուն դեռ հայերը տէր են զոհարեղէններու հնդկական հրապարակին վրայ: Արա Ռայնալ 1770—ական թիւերուն համար կը վկայէ, որ Բէկու (Պէնկալի ծոցը) առեւտուրը «այժմուս կարեալ է Ավաէն, ուր հայերը միայն կրնան գնել ամէն ինչ, որ Բէկուէն կը հայթայթուի,— սարգիոն (թոփաղ, տպա-

24) Անդ էջ 376-377):

25) Travels.— Edward Daniel Clarke.— London.— London, 1810, p. 305:

23) Armenians in India.—p. 261-262: